# 210 Հիսուսն ասաց Իր աշակերտներին.



1. Հիսուսն ասաց Իր աշակերտներին.
«Արթո՛ւն կացեք, աղո՛թք արեք,
Ինձ է տրված ամեն իշխանություն
Երկնքում ու երկրի վրա:

2. Երբ լինեն աղետ ու կոտորածներ,
Արթո՛ւն կացեք դուք, Ի՛մ զավակներ,
Ես միշտ ձեզ հետ եմ, Ի՛մ սիրելիներ,
Հավատք ունեցեք, կհաղթեք:

3. Կլինեն և՛ սով, և՛ փորձություններ,
Կրակի բոցեր, սուր տագնապներ,
Ամբարիշտներն ահով կփախչեն՝
Փողոց նետելով ոսկիներ»:

4. Ավետարանը պիտի քարոզվի,
Բովանդակ աշխարհում տարածվի,
Ապաշխարեցե՛ք, ո՛վ ժողովուրդներ,
Մոտ է Հիսուսի գալուստը:

5. «Ահա գալիս եմ, դուք պատրաստ եղե՛ք,
Չլինի հիմար կույսեր լինեք,
Միշտ արթո՛ւն եղեք, Ի՛մ սիրելիներ,
Շուտով կգամ, ձեզ կտանեմ»: